ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շորեքշաբթի, 4 Նոյեմբերի 1898 Շորեքշաբթի, 4 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատուկ 5 կ.
Ընժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., բեկլամների համար՝ կրկնապատիկ։

WIEN 62 12 PESTELLT 23.11.98 11-12 V 2 Kreuzer

№ 199

ՆՆԵՐ

ԹՈՎՆԱՑ

սրարձու-
խորհուր-
տութիւն
ոյեմբերի
տամեան
մէջ կարճ
է փորա-
նդէս, ո-
կըյատ-
Յուցա-
ոյեմբերի
մինչև
ը առա-
մինչև օ-
ի համար
րները—
բեխանեհ-
ի օրերը

...ել եմ մ
...56% պր
Առաձնա
...եր։

Ր

...ն, որ չի-
...արհեստա-
...ծ են չա-
...սի մի զոյգ
...12 րուբ.։
ՎԱՃԱՐԻ, վե-
...ная, 6.
0—7

...ՀՆ

...ը «ԱՍՏՂ»
...չ մի բա-
...կեղծած,
...անոյ բա-

...ւմ 6 տա
...ղուում են
...ուղարկ-
...րելոկով,
...շատակին
1 ր. 75
ԻՑԿԱԳՈ.
№ 5.
6—5

...ե № 387

«Նոր-Դար»-ի խմբագրատունը գտնւում է Եօլչայա-վադաւոզնայա փողոց, Ակվազովի տունը, № 20, Սաաթեօրնի ղօրանոցի դիմացը։

Նոյեմբերի 1-ից ց31-ն ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 2 րուբ. 50 կոպ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Քաղաքական աշխարհից։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Ղուշուց։ Թաւրիզից։ Սխալքալաքից։
Կանոնի Դերասանները։
Մամուլի Ղուրջը։
Թղթակցութիւններ.—Նամակ Գերմանիայից Միւնխենից։
Քաղաքական.—Անգլիա։ Գերմանիա։ Կրէտէ։ Չինաստան։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
«Նոր-Դար»-ի պատասխանները։
Բանասիրական.—Պալճըին սփոփանքը։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 3 Նոյեմբերի, 1898 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԻՒՐՀԻՑ

Վերջին տարիներում տեղի ունեցած զարհուրելի կոտորածները, աղետները միմիայն մի բարի հետևանք ունեցան։ Կրետէ կղզին ազատուեց թրքական բռնկիչից և ստացաւ ինքնավարութիւն։

Ստացաւ ինքնավարութիւն ենք ասում, որովհետև այդ մասին էլ տարակուսել կարելի չէ, քանի որ չորս մեծ պետութիւնները միացած վերջ տուին թրքական իշխանութեանը Կրետէում և, ուսաց կառավարութեան միջամտութեամբ ու նախաձեռնութեամբ Յունաստանի թագաւորի երկրորդ որդին՝ պրինց Գէորգը կոչւում է Կրետէ՝ իբրև ընդհանուր-նահանգապետ ինքնավար Կրետէի։

Չորս մեծ պետութիւնների ծովակալները որոշել և ստիպում են թրքական կառավարութեան հեռացնել Կրետէից թրքական զօրքը, ժանդարմեան, թրքական վարչութիւնը և այն ամենը ինչ որ կարող է այսպէս թէ այնպէս յիշեցնել երբեմն կղզու վրայ տիրող թրքական իշխանութիւնը։

Թուրք զօրքը և աստիճանաւորները հեռանում են հետզհետէ Կրետէից և մահմեդական բնակիչների պաշտպանութիւնը Կրետէում իրենց վրայ են առել եւրոպական չորս տէրութիւնների ծովակալները։

Պրինց Գէորգի՝ Կրետէի ընդհանուր-նահանգապետութեան պաշտօնի ստանձման օրն, որ չուտով տեղի կունենայ հանդիսաւոր կերպով, վերջանում է թրքական իշխանութիւնը Կրետէում և սկսւում է յունականը, քանի որ վաղ թէ ուշ ինքնավար Կրետէն միանալու է մայր Յունաստանի հետ։

Այսպիսով մենք ականատես ենք Կրետէի ազատութեան, այսինքն պատմութեան մէջ կրկնուող այն երևոյթին, որ մի երկիր ստանում է արիւն թափելուց, հալածանքից, զրկանքներից յետոյ այն, ինչ որ կարող էր հենց ընկզմումը ստանալ, և հակառակ կողմը ազատ կըմնար ահագին վնասներից և վերջումը կրած պարտութիւնից։

Յունաստանը դարուս սկզբումը ազատուեց թրքական իշխանութիւնից մեծ պետութիւնների շնորհիւ, որի մէջ Ռուսիան մեծ դեր է խաղացել. այժմս էլ Կրետէն է ազատւում նոյնպէս մեծ պետութիւնների շնորհիւ ու այդ ազատութեան գործում գլխաւոր դեր Ռուսիան է, որ նշանաւոր դեր է կատարում։

Ուշադրութեան արժանի է, որ ինչպէս Յունաստանի ազատութեան, նոյնպէս և այժմ Կրետէի ազատութեան գործում Ռուսիան և Անգլիան միացած համերաշխութեամբ են գործում։

Կրետէի գործում համերաշխութեամբ գործելով, այսօր Անգլիան Փաշողի խնդիրը առիթ որոնած՝ խիստ և եռանդով զինւում է։ Բոլոր ծովերում և ովկիանոսներում անգլիական պատերազմական նաւերը զինւում են։

Շարժումը այնքան զօրեղ է Անգլիայում և պատերազմի սէրը այնքան բորբոքուած, որ միշտ խոհեմութեամբ և զգուշութեամբ գործող Մարկիս Սոլսբրին հասարակաց ձայնին հետևելով դէպի Ֆրանսիան խիստ և սպառնական դիրք բռնեց։

Ֆրանսիան ստիպուեցաւ զիջանելու և հեռանալու առանց այլևայլութեան, Փաշողայից։ Ինչքան էլ որ ասեն, թէ Ֆրանսիան իմաստութեամբ վարուեց, որ չարժէր մի ինչ որ Փաշողայի համար պատերազմի վտանգին ենթարկուել, որ Փաշողան իսկապէս մի նշանակութիւն չունի Ֆրանսիայի համար, բայց և այնպէս թէ ֆրանսիական և թէ օտար մամուլը միաբերան խոստովանւում են, որ Ֆրանսիան զօրեղ հարուած ստացաւ և առանց պատերազմի յաղթուեց, ստորացաւ։

Կան ֆրանսիացիներ, որ Ֆրանսիայի անուան հասցրած այդ հարուածն այնքան զօրեղ և զգալի են համարում, որ համեմատում են 1870-ին կրած պարտութեան հետ։

Բանն այնտեղ է հասել, որ անգլիացիների դէմ, այնքան են զբաղուած ֆրանսիացիները, որ արդէն զերմանացիների դէմ ունեցած հակառակութիւնը ոչ թէ միայն մոռանում են, այլ կրկնամեայն միանալ Անգլիայի դէմ կռուելու համար։

Դրանց հակառակ՝ անգլիացիները խիստ հպարտացել են և ունեցած աջողութեամբ չեն բաւականանում, այլ աչքարէս ամեն անկիւնում Ֆրանսիայի հետ ունեցած կամ ունենալիք հաշիւները միանգամից մաքրել են ուզում։ Անգլիան շարունակում է տենդային արագութեամբ զինուել և ամբողջ եւրոպական մամուլը տարակուսանքի մէջ ձգել։

Ընդհակ Փաշողան կամ Ֆրանսիան մի պատրուակ չէ, որով աշխատում է թագցնել բրիտանական կառավարութիւնը զինուելու բուն նպատակը։

Այս մասին եւրոպական մամուլը իւր դիտողութիւններն է անում, բայց մարկիզ Սոլսբրին չէ թագցնում, թէ ինչ նպատակով Անգլիան շարունակում է զինուել։

Մարկիզ Սոլսբրին իւր վերջին ճառի մէջ ասում, է ի միջի այլոց, թէ կարող են կառավարութիւնից հարցնել պատերազմի պատրաստութեան պատճառը. «եթէ ոչ Կրետէի, ոչ Սերբիայի, և ոչ էլ Եգիպտոսի համար է, ապա ինչո՞ւ համար է պատրաստութիւնը»։ Սոլսբրըի այդ հարցմունքին պատասխանելով, յայտնում է, որ պատճառը իրերի այժմեան դրութեան մէջ պէտք է որոնել։

«Ներկայումս, շարունակում է Սոլսբրըին, երբ պատերազմը կարող է ընկճուել սարսափելի արագութեամբ, մենք, որ գաղութների և ծովային մեծ տէրութիւն լինելով թէպէտև ծովային բաւականաչափ ոյժերի տէր ենք, բայց և այնպէս մեր կայսերութիւնը կարող է մի վայրկեանում կործանուիլ։ Ահա թէ ինչո՞ւ մենք չենք կարող ծովի և ցամաքի վրայ զգուշութեան համար՝ պատերազմական պատրաստութիւնները դադարեցնել։

Այդ միջոցները երկիրներ գրաւելու նպատակ չունին։ Մենք սարսափում ենք պատերազմից, բայց մեզ վրայ պարտք է դրուած անխափան յանձնելու մեր կայսերութիւնը մեր յաջորդներին»։

Անգլիական առաջին մինիստրի այս խօսքերից պարզ է, որ Անգլիան միայն Ֆրանսիայի դէմ չէ զինւում, այլ յամենայն դէպս,

---

Նոյեմբերի 1-ից ց31-ն ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 2 րուբ. 50 կոպ.։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱԼՃԸԻՆ ՍՓՈՓԱՆՔԸ *)

(Պոլսոյ բարքերէն)

Ներս մտնողը Պալճըն էր։

Աննիկ զարմացաւ զայն տեսնելով՝ մանաւանդ այսպէս տարաժամ։

—Ինչ կ'ուզես, Պալճը, հարցուց կէս անհամարձակ ու կէս չուարուն շեշտով մը։

—Դէ, ներս եղիր ան, քեզի խօսք ունիմ ըսելու։

Աղջկան սիրտը կասկածի մը, վախի մը ղգացումը մտաւ նախ, բայց գիտակցելով, իմացած ըլլալով Պալճըի մասին խօսուած նպաստաւոր լուրերը՝ հանդարտեցաւ։

Ներս գացին։

—Կը նեղնես, որ մուխը պիտի նըստինք. ինչ ընեմ, ադրաս, մարդ չ'ունիմ, մարդասանկ չ'ունիմ, որ կազ բերել տամ։ Ստակովդ խեղճութիւն պիտի քաշես. ահա անտէրութեան վերջը...

Պալճը չ'խօսեցաւ և յանկարծ տեղն ցատկեց ու դռնէն դուրս նետուեցաւ։ Քանի մը վայրկեան վերջն արդէն սենեակը համեստ լոյսի մը տակ կը պարզէր իր աղքատիկ ու անշուք կահաւորումը։

—Աննիկ, գիտես ինչու համար եկայ։

—Խէր է Աստուծով։

—Հա, խեր է։ Մէկ երկու խօսքով ըսեմ մտադրածս։ Անտէր աղջիկ մըն ես տուն, անտէր և համեստ միևնոյն ժամանակ։ Ձես մտածեր բնաւ քու ապագայիդ մասին. ինչ պիտի ըլլայ քու վերջդ...։ Սիրեցի քեզի, ու հիմա կուզեմ որ ամուսնանանք միասին։ Համաձայն ես իմ առաջարկութեանս։

Օ՜ֆ, սրտին վրայէն բաւական մեծ կակ ու ծանր բեռ մը վերցուցին կարծես թէ. վերջապէս կրցաւ յայտնել ինքզինքը, բանալ իր սիրտը։

Բայց Աննիկը գլուխը կախեց, կարմըրեցան անոր այտերն ու ինք լուռ մնաց, պատասխան չ'տուաւ։ Հաւանեցա՞ւ արդեօք իր առաջարկին։

Պալճը երկիւղի և յոյսի հակոտնեայ ղգացումներու ազդեցութեան տակ շարունակեց.

—Աննի՛կ, 28 տարեկան եմ, դեռ երիտասարդ կը սեպուիմ։ Մինչև այսօր ես սիրտիս մէջ տաք բան մը չ'զգացի, մինչև այսօր աղջկան մը վրայ չ'մտածեցի ու խաղաղ քնացայ գիշերները, թիակներուն տակ յոգնած իմ ամբողջ մարմինս հանգչեցնելով անկողնիս մէջ։ Այս գիշեր չեմ քնացեր, մինչև լոյս գլուխս կ'այրէը կոր, աչքիս առջև էիր այսօր մինչև իրիկուն։ Կ'երևայ թէ աղուոր բան է սիրելը, անուշ բան է. անիկա անհոգ, անգործ մարդերէն աւելի մեզի պէտք է կարծեմ, որովհետև մէկը սիրելով է որ գործիդ եռանդ աւելի ուժով կ'լինաս...։ Մի վախնար, հարցուր, փընտռէ, իմ մասիս տեղեկութիւններ հաւաքէ և ետքը կարգուէ հետս, եթէ ան գիս...

—Գիտեմ արդէն, ես...

—Ուրեմն, ընդմիջեց Համի-Միհրան խօսքը չարունակելով, կը համաձայնիս ինձի հետ, անանկ չէ՞... Օ՜ֆ, չ'գիտես թէ որչափ սիրեցի քեզի, դուն ինձի բարի ու վհանձն մարդ ըլլիր... Մե՛ղք որ ասկէ առաջ այնչափ ժամանակ ճըգնաւորի մը պէս ապրեցայ ծովերուն մէջ, չուրերուն վրայ, ալիքներէն երերուն. մե՛ղք որ ալիքներուն վրայ, բայց ծովուն մէջ թռչող ճերմակ մարթիններուն (տարմորոր) չափ ալ զգայուն չեղայ այն ատեն. անոնք իրարու եռևէ կը վազէին, մէկ-մէկու քով կը թռչէին ու ես կը խնդայի անոնց վրայ՝ միշտ թիակներս և թիակներուս հետ թևերս չարժելով... Ուրեմն այսպէս, անանկ չէ...

—Ամենն ալ աղէկ ըսիր...

Ուրախ, պզտիկ տղէ մը աւելի ուրախ էր Համի-Միհրան. աղքատիկ պզտիկ տղէ մը ուրախ՝ օրուն՝ կաղանդին առաջին օրն անյուսալի կերպով հարուստին մէկն ինքնաշարժ պզտիկ չոգեկառք մը կամ փայտէ ձի մը կը նուիրէ։

—Այսպէս ուրեմն՝ կը կարգուինք մենք ու կը տեսնաս որ ուրիշները նայելով մեր վրան պիտի նախանձին։ Ա՛խ, Աննիկ, ան աստեն պիտի տեսնան որ ինչպէս վարդի նման պիտի ապրեցնեմ քեզի, թռչունին կաթն իսկ անպակաս պիտի ըլլայ մեր տունէն։ Թագուհիէ մը աւելի երջանիկ պիտի զգաս դուն քեզի։

—Այդ ամենը շատ լաւ ըսիր, սակայն... ես արդէն երկու օր առաջ նշանուեցայ Բէշիկ-Թաշի մէջ։

—Է՛...

Ու խեղճ տղան զգաց թէ պիտի կաթուածահար ըլլար։

—Այնպէս որ հիմա չ'եմ կրնար նշանս ետ տալ ու քու փափաքդ կատարել։

Ի՞նչ ըսէը, ինչ ընէը ալ. տղաչէը՝ անօգուտ էը. սպառնար՝ ցածութիւն. լար՝ տղայութիւն։

Չայն չ'հանեց։

—Ուրեմն կը ներես որ քեզի ձանձրացուցի, ըսաւ։

Ու դուրս ելած ժամանակ,

—Գիտէի որ ըրածս էշութիւն էր, էշութեան ալ էն մեծը, մրթմրթաց։

***

Ինկած մուխին մէջ սեփ-սև, կը յառաջանար խեղճ Համի-Միհրանը, մտամոլոր, յոգնած, ջախջախուած ու փեթըրտուած սիրտով. մինակ լացն էր պակաս։

Գլուխն իջեցուցած կուրծքին վրայ աչքերը գետնին յառած, կը յառաջանար եղի Գուլէի ամայի ու լայն ճամբան բռնած։ Ո՛ւր կ'երթար, ինչու՞ կ'երթար։ Ինքն ալ չէը գիտեր։ Կ'երազէր. ո՛չ, չէը մտածեր, չէը երազեր, այլ խեղթենալու պէս բան մը կը զգար։ Սրտին մէջ, ուղեղին մէջ ցաւ մը կար։ Ցա՛ւ. չէ, որովհետև այդ մարմնական, նիւթական նեղութիւն չէը՝ որմէ կ'անհանգըստանար, այլ տանջանք մը՝ որ սիրտը կը չարչարէը՝ մտալկում մը, որ ուղեղին վրայ կ'իյնար հալած կապարի ծանրութեամբ ու տաքութեամբ, վիշտ մը՝ որ հոգին կը գալարէը, կը պրկէը, անգթայ ու անկարեկիր պողպատէ մեքենայի մը պէս։

Չը՛հը՛մ. ա՛հ՝նչ է սէրը՛։ Պզտիկ տղաներու խաղալիք՝ զոր ունենալը, զգալն

*) Տես «Նոր-Դար» № 199։

ՔԱՂՔԱՅԻՆ

Մեզ հայտնում են Ս. Ջրվեժից, որ 27-ին այնտեղ է ժամանել գնդապետ Ի. Վասիլիևը հետևակային գնդի 2-րդ գումարտակի հրամանատար Ա. Կնիազյանի հետ։ Ընդունելության ժամանակ Ս. Ջրվեժի հայ բնակիչները 50-ամյակ տոնեցին։

Ներկա էին գնդի սպայական կազմը, տեղական հոգևորականությունը և ուրիշներ։ Ընթրիքի ժամանակ հնչեցին բազմաթիվ կենացներ։ Ամենից առաջ կենաց խմեցին կայսեր, կայսրուհու և գահաժառանգի համար։ Ապա կենաց խմեցին գնդի հրամանատարի, գնդի սպայական կազմի, գնդի զինվորների և Ս. Ջրվեժի հայ բնակչության համար։ Ընդունելությունը տևեց մինչև առավոտյան ժամը 4-ը։

Ս. Ջրվեժի հայ բնակիչները գնդի սպայական կազմին հրավիրեցին նաև հաջորդ օրը ճաշկերույթի։ Ներկա էին գնդի սպայական կազմը, տեղական հոգևորականությունը և հայ բնակիչները։ Ճաշկերույթի ժամանակ ևս հնչեցին բազմաթիվ կենացներ։ Ընդունելությունը տևեց մինչև առավոտյան ժամը 4-ը։

***

Ներկայումս Ս. Ջրվեժում գտնվում է 3-րդ հրետանային բրիգադի 3-րդ մարտկոցը, որի հրամանատարն է շտաբս-կապիտան Ի. Ա. Ղազանչյանը։ Մարտկոցի սպայական կազմը և զինվորները մեծ հյուրասիրություն են ցուցաբերում տեղի հայ բնակչության հանդեպ։ Հատկապես մարտկոցի հրամանատարը, որ ինքն էլ հայ է, մեծ ուշադրություն է դարձնում հայ բնակչության հետ մերձենալու։ Նա հաճախ է հրավիրում հայ բնակիչներին իր մոտ, ինչպես նաև ինքն է գնում նրանց մոտ։ Ամենայն հավանականությամբ մարտկոցը Ս. Ջրվեժում կմնա մինչև ձմեռ։

***

Ներկայումս Ս. Ջրվեժում է գտնվում նաև 3-րդ հրետանային բրիգադի հրամանատար գեներալ-մայոր Ա. Ա. Ղազանչյանը։ Նա ժամանել է Ս. Ջրվեժ մի քանի օր առաջ։ Գեներալ-մայորը ևս մեծ ուշադրություն է դարձնում հայ բնակչության հետ մերձենալու։ Նա հաճախ է հրավիրում հայ բնակիչներին իր մոտ, ինչպես նաև ինքն է գնում նրանց մոտ։ Ամենայն հավանականությամբ գեներալ-մայոր

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ի. Ս. Ս.

Ընթերցողները հիշում են, որ մենք ասացել էինք, թե Ս. Ս. Ս. Ի. Ս. Ս. Ս

չահոտ բուրմունք. բացի մայիսի վարդը ինչ ծաղիկ, ինչ տեսակ վարդ ասես չըկայ։ Ջատ տեղ հաչուող գերմանացին չըմոռանալով գործնականը, զարգարել է չիբլիմը և արհեստական գիմացկուն ծաղիկներով, այս տեսակներն էլ ցույց են տալիս արհեստի կատարելութիւնը։

Այնքան գրաւիչ էր առաջին գերեզմանատան ակցիլոմինս, որ այդտեղից դիմեցի դէպի միւսը, երորդը և ամեն տեղ նոյն ծաղիկների ոճը, նոյն բուրմունքը և նոյն ակնածութիւնը դէպի ննջեցեալների յիշատակը, մարդկանց աճիւնները։ Երեկոյ էր ժամի 7-ն անց, ես դեռ լուսնեակի լուսաւորութեամբ հանդարտ առաջ էի քայլում դէպի հարաւային գերեզմանատան խորքը, այդ ծայրէ ցուցահանդէսը։

Ութն էր ժամի, երբ դուրս եկայ գերեզմանատնից փողոցը, միայն այդտեղ յիշեցի, որ արդէն մութ է, և ես գերեզմանատանն էի այդ րոպէին։ Մթնով գերեզմանատան մօտով անցնելն անգամ մեր երկրում քաջութիւն է համարւում, իսկ մթնով ներս մտնելը դա արդէն գրաղի նիւթ է։

**

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ.—Անգլիայի զինումները, որոնք շարունակւում են ամենայն եռանդով, առիթ են տալիս լրագիրներին հազար ու մի ենթադրութիւններ անելու։ Լանդոնի մինիստրական բևեռան թևերթը, «Նով. Վր.»-ի թղթակցի ասելով, ճիշտ կերպով չեն յայտնում այդ զինումների իսկական նպատակը, բայց յայտարարում են, թէ Անգլիան զինւում է նրա համար, որ եռանդուն մասնակցութիւն ունենայ քաղաքական ընթացիկ հարցուածոց բոլոր խնդիրներում։ Քաղաքական շրջաններում ուղղակի ասում են որ Անգլիայի զինումները կըշարունակուեն առնուազն այնքան ժամանակ, մինչև որ Փրանսիան գիչէ Փաշոդայի խնդրի բոլոր կէտերը և իւր զօրքերը հեռացնէ Բար-էլ-Հաղելի բոլոր բերդերից և պատերազմական դիրքերից։ Փրանսիան պէտք է պաշտօնապէս հրաժարուի այդ գաւառի վրայ ունեցած բոլոր յաւակնութիւններից և պէտք է դադարի Եգիպտոսում Անգլիայի բռնած դիրքի դէմ գժուարութիւններ յարուցանելուց։ Անգլիական մի քանի շրջաններում այդ բնական չեն համարում և պահանջում են, որ զինումները շարունակուեն այնքան ժամանակ, մինչև որ եգիպտոսի վրայ վերջնականապէս հրաժարակուի բրիտանական գերիշխանութիւնը և մինչև որ Անգլիայի ձեռքն անցնին Կահիրէի և Բարեյուսոյ հրուանդանի միջև գտնուած բոլոր հողերը։

Ջատերը կարծում են, որ մարկիզ Սոլսբըրին պատրաստ կըլինէը պատերազմի դիմելու, եթէ համոզուած լինէը, որ Գերմանիան պիտի օգնի իրեն յայտնի պայմաններով։

Վիլհելմ կայսրի դէպի Անգլիան ունեցած բարեկամական տրամադրութեան նշան են համարում այն հանգամանքը, որ կայսրը Կ. Պոլսում եղած ժամանակ հրաժարուել էր ընդունելու նախկին մեծ վեզիր Ջեւադ փաշային, որովհետև իմացել էր, որ վերջինս վատ էր վարուել անգլիական մի թղթակցի հետ։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Քաղաքական աշխարհում ահագին աղմուկ է հանել մի լուր, թէ Գերմանիան ձեռք է բերում Թրիպոլսի մի մասը։ Այդ մասին վերջին տեղեկութիւնը հեռևեալն է. Վիլհելմ կայսրը դիմել է սուլթանին խնդրելով թոյլ տալ իրեն գերմանական մի ընդարձակ գաղութ հիմնելու Թունիսի սահմանում։ Սուլթանն, ըստ երևոյթին, տրամադիր է այդ դիջողութիւնն անելու, յոյս ունենալով, որ այդպիսով կարգիլէ Ֆրանսիացիների յառաջ խաղացումը։ Սուլթանին երկիւղի առիթ էր տուել այն իրողութիւնը, որ մօտերքս Ֆրանսիական մի զօրախումբ անցել էր սահմանը և 35 քիլոմետր առաջ էր գնացել դէպի Թրիպոլիս։ Ֆրանսիացիները նահանջ տուին, բայց Թրիպոլսում իրարանցումը մեծ էր այնպէս, որ իշխանութիւնը ստիպուած էր զէնք բաժանել մահմեդական բնակիչներին։

Գերմանական մամուլը կամ լսում է այս մասին, կամ չի հաւատում այս լուրի ճշմարտութեանը, ի նկատի կացուցանելով, որ Գերմանիայի շահերն ամենևին չեն պահանջում գերմանական ազդեցութիւնը հաստատելու Թրիպոլսում և թէ Գերմանիային վերագրուող մտադրութիւնը չի համապատասխանում նըրա գաղթային քաղաքականութեան ըսկզբունքներին։

—

ԿՐԵՏԷ.—«Պետ. Վեդ.»-ի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, թէ ելզըզ-Քէօշկում մուտք ունեցող մարդիկ տրամադիր են կարծելու, որ դուռը կամենում է Կրետէ կղզին զիջելու Ռուսիային վերջինիս տալիք պատերազմական տուգանքի հաշուին, որովհետև արդէն հասկանում է, որ այդ կղզին կորած է իւր համար։

—Ծովակալները կղզու կառավարութիւնն իրենց ձեռքն առան ամենահանդիսաւոր կերպով. հոկտեմբերի 24-ին, արևածագին, օսմանեան զօրքերը բոլորովին հեռացան Կանէայի բերդից, որից յետոյ անմիջապէս այդ բերդը մտան չորս պետութեանց զօրքերը։ Կանդիայում անգլիական իշխանութիւնն իւր ձեռքն առաւ վարչական և հասարակական բոլոր հիմնարկութիւնները, ինչպէս և բոլոր բերդերը, որոնց վրայ ծածանող թրքական դրօշակն իջեցրին և տեղը բարձրացրին անգլիական դրօշակ։ Սակայն, Կանդիայում մնացած թրքական զօրքերի վերջին մասը անգլիացիները ստիպուած էին զօրով թրքական նաւ նստեցնելու, որովհետև Ճեֆքի փաշան չէը ուզում կամովին հեռանալ։

—

ՀԻՆԱՍՏԱՆ.—Պեկինից հեռագրում են, որ մայրաքաղաքի շրջակայքում մեծ թուով չինական անկոնոն զօրքեր կան, և այդ հանգամանքը մեծ մտահոգութիւն է պատճառում օտարերկրեայ պետութեանց ներկայացուցիչներին։ Ասւում է, որ իրերի այս դրութեան նկատմամբ պետութիւնները միասին հարկաւոր միջոցները պիտի ձեռք առնեն։

—Կայսրուհին մի նոր հրաման է հրատարակել, որով չինաց զօրքի մէջ նորից պիտի մտցուի նետի և աղեղի գործածութիւնը։ Լսւում է, որ այդի կայսրուհու հրամանով, պալատում բարբարոսական տանջանքների և մահուան են ենթարկւում յեղափոխութեան այն բոլոր կողմնակիցները, որոնց չնորհիւ նա իւր ձեռքն առաւ իշխանութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նաւաշինութիւնը Ճապոնիայում — Ճապոնեան, որ մինչև այժմ ներոպայի և մասնաւորապէս» Անգլիայի գործարաններին էր դիմում մարտանաւերի շինութեան համար, քիչ ժամանակից այլևս կարիք չ'պիտէ ունենայ նրանից։ Բազմաթիւ զօրաւոր ընկերութիւններ են կազմուած այժմ Օսակայում՝ մասնաւորապէս շոգենաւերի շինութեան համար։ Վերջին մի տարուայ ընթացքում այդ գործարանները շինել են 45 շոգենաւ, որոնցից 4-ը պողպատ է. որոնց ամբողջութիւնը ներկայացնում է 833,268 տոննա և 947,700 ձիու ոյժ։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՊԱՐԻԶ, 2 նոյեմբերի. — «Հաւատի գործակալութիւնը» Կոլմարից «Վէյլ» սատրապութեամբ մի հեռագիր է ստացել, որի մէջ հաղորդւում է, թէ կապիտան Դրայֆուսը վախճանուել է։ «Հաւատի գործակալութիւնը» նկատում է թէ դեռ ևս չի կարողացել ստուգել այդ տեղեկութիւնը, թէ Դրայֆուսի մասին պաշտօնական վերջին տեղեկութիւններն ընդհակառակը, հանգստացուցիչ են, և աւելացնում է, որ Կոլմարում գործակալութեան թղթակիցը Վէյլը չէ։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Բազում.—Ա. Ա.-ին։ Գրեցէք ձեր հասցէն. մոռացել էք։

Գահիրէ.—Հերմէս. Ուրիշ խնդիրների և ուրիշ երևոյթների մասին՝ գրեցէք։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Մ'լեթում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 3 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 5 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող 1 կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մ'լեթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Դուդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օր, եր. 7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 5 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 *Բազումից Թիֆլիս* մեկնում է օրուայ 4 ժ. 15 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 8 ժ. 38 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 20 ր., հասնում է *Բաթում* եր. 8 ժամին 52 ր.

Փոստային գնացքը № 3 *Բազումից Թիֆլիս* մեկնում է գիշ. 10 ժ. 50 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 5 ժ. 9 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 6 ժ. 10 ր., հասնում է *Բաթում* առ. 7 ժամին։

Մարդատար գնացքը № 2 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* առ. 8. ժ. 30 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 8 ժ. 30 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* եր. 9 ժ. 15 ր., հասնում է *Բազու* օրուայ 1 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* եր. 8 ժ. 40 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 9 ժ. 55 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* առ. 11 ժ. 20 ր., հասնում է *Բազու* առ. 5 ժ. 42 րոպէին։

—

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
(Սոլոլակ, *Սադովայա փողոց*, № 64)
(սեպհական տուն)
Հեռաթոռ № 230

Երեւեկ հիւանդների ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4-ը յերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդներ և ծննդարեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Ջուննորները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մտնողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երեւեկ բոլոր հիւանդները պիտի և նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձր ի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

—

ԴՈԿ. Գ. Ս. ՀԵՐՑԻԼԴ

որ իւր մասնագիտութիւնը պարապել է Վեննայում, ընդունում է կաշուի, վեներական, մէզական և սիֆիլիտիկական հիւանդութիւններ ունեցողներին՝ ամեն օր առաւօտեան 9—11 ժամը և երեկոյեան 5—8 ժ.։ Մ'ասերեան փողոց, № 5, Լիսիցեվի տուն։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՏՄԱՐՈՒՀԻ ՄԱՐԻԱ ԱԼԻ-ՔՍԱՆԴՐՈՎՆԱՅԻ անուան կոյրերի հոգաբարձութեան Կովկասի ճիւղի խորհուրդը յայտարարում է իւ գիտութիւն ընդհանրութեան, որ նոյեմբերի 1-ին գինուորական - պատմական թանգարանի շինութեան մէջ կարճ ժամանակով բացւում է փորագիրը նկարների ցուցահանդէս, որից գոյացած արդիւնքը կըյատկացուի կոյրերի օգտին։ Ցուցահանդէսը բաց կըլինի նոյեմբերի 1-ին օրուայ ժամը 3-ից մինչև 4-ը. իսկ յետոյ ամեն օր առաւօտեան ժամը 11-ից մինչև օրուայ ժամը 4-ը։ Մուտքի համար վճարում են՝ հասակաւորները 30 կ., ուսանողները և երեխաները—15 կ.։ Երկուշաբթի օրերը —50 և 30 կ.։

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրասենեակում վաճառւում են՝

	Ր.	Կ.
Ազաթանգեղոսի պատմութիւնը.	1	»
Ստեփաննոս տարօնեցու պատմութիւնը.	2	»
Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը	1	50
Ղեւոնդ պատմագիր.	2	»
Դասագիրք կրօնի ուսուցիչների համար	1	75
Ժամանակագրութիւն հայոց Թարաեւի.	1	25
Հանրամատչելի քնախօսութիւն Լուսնկաչի.	1	»
Հանրամատչելի աստղաբաշխութիւն Ֆլամմարիօնի.	1	»
Քննական պատմութիւն հայոց Թարագաշեանի.	4	»
Պատմութիւն հայոց, Պալասանեանի.	1	50
Ակնայ հնութիւնը, ճանիկեանի	2	»
Մ'անկական լօտօ, (հայ., ռուս., ֆրանսերէն և վրացերէն).	1	20
Ազգային ջօջեր, Պալասանեանի	1	»
Դաւիթ Կօպպերֆիլդ, Տիկկենսի.	1	»
Վէպիկներ և զրոյցներ, Մօպասանի	1	»
Ծո՞ երթաս, Սենկեվիչի	1	50
Մ'արդ եմ, էրնըսի.	1	»

Դիմել՝ Тифлисъ, Тифлисское Общ. Изд. Армянскихъ книгъ.

(1105) 50—17

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ

ՄԱՐԴԵՄ

(HOMO SUM)

ՎԷՊ

Գերմաներէն բնագրից թարգմանեց

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

428 երես, ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ

Դիմել՝ Армянское Издательское Общество въ Тифлисѣ.

1067) 50—42

ՄԱՄՈՒԼԻ ՏԱՆՆ Է

և շուտով լոյս կըտեսնէ

ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

կրիտիկական յօդուածք

Ա. ԳՐՔՈՅԿ.

Հեղինակութիւն

ՌՈՒԲԼԻՆ ԲԵՐԲԵՐԵԱՆԻ.

(1116) 2—2

Լոյս տեսաւ ՄԵՐ ԿԱԶՄԱԾ

1899 ԹՈՒԻ, ՍԵՂԱՆԻ ԵՒ ՊԱՏԻ

թ. ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ։ Հարուստ յատկազարդով և նրազահանով։

Ցանկացողները թող շտապեն մեզ յայտնելու, որպէս զի իւր ժամանակին կարողանանք հասցնել։

20—10 (1001) *Թիֆլիս՝ Մակար Ջմշկեան։*

ДАРОМЪ раздаются ПОРТРЕТЫ
писанные карандашомъ-вересковдомъ

Чтобы распространить въ Россіи свои прелестные портреты, писанные Карандашомъ-Верескледомъ, АРТИСТИЧЕСКОЕ ОБЩЕСТВО ПОРТРЕТОВЪ въ Парижѣ СОВЕРШЕННО БЕЗПЛАТНО напишетъ всякому читателю или подписчику нашей газеты портретъ Карандашомъ-Верескледомъ большой цѣнности. Для того это объявленіе должно быть отрѣзано и прислано вмѣстѣ съ Вашею фотографіею, по которой Вашъ портретъ долженъ быть написанъ, въ опредѣленный 25-дневный срокъ, считая съ настоящаго числа журнала, и если лицо предложитъ свою готовность рекомендовать наше Общество между своими родственниками и знакомыми. Просимъ писать четко Вашу фамилію и адресъ на снимкѣ фотографіи и прислать ее черезъ почту подъ слѣдующимъ адресомъ: Mon TANQUEREY, Directeur de la SOCIÉTÉ ARTISTIQUE DE PORTRAITS, 9, rue de St-Petersbourg. Paris (France) — Парижъ Франція. — Ваша фотографія будетъ Вамъ возвращена безъ поврежденія вмѣстѣ съ большимъ портретомъ, какъ только послѣдній будетъ готовъ.

М) 12334.7 11—7

Дозв. цензурою. Тифлисъ, ноября 3-го дня, 1898 г. Ցպարան Ա. Ի. Գեաբովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387